ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Դասընթացի նպատակը

Դասընթացի նպատակն է պետական կառավարման համակարգի տեղեկատվական ստորաբաժանումների աշխատակիցներին փոխանցել համապարփակ գիտելիք և փորձառություն Տեղեկատվության ազատության ազգային եւ միջազգային կանոնակարգումների, հրապարակայնության ապահովման առցանց եւ առկա գործիքների ու մեխանիզմների վերաբերյալ:

Մասնակիցներ - Պետական կառավարման մարմինների հասարակայնության հետ կապերի և տեղեկատվության ստորաբաժանումների աշխատակիցներ, տեղեկատվության ազատության պատասխանատուներ, մամուլի խոսնակներ:

Ծրագրի տևողությունը- 6 ժամ (40 րոպե ընդմիջմամբ): Առցանց դասընթացն իրականացվում է 2 օրերի ընթացքում՝ յուրաքանչյուրը ժամ տեւողությամբ:

Ուսուցման ձևաչափը և մեթոդները - առցանց դասընթաց, որը կանցկացվի հետեւյալ մեթոդներով.

- պրեզենտացիաներ և դասախոսություն,
- հարցեր և պատասխաններ,
- քննարկումներ,
- մտային գրոհ,
- խմբային աշխատանք
- դերային խաղ (միայն առկա դասընթացի դեպքում):

Ուսուցանող - Շուշան Դոյդոյան ՄՍԻ-ի փորձագետ, Ինֆորմացիայի ազատության կենտրոն ՀԿ ղեկավար, ԵՊՀ դոցենտ, բ.գ.թ.

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԹԵՄԱՆԵՐԸ

Թեմա I. Դասընթացի նպատակի եւ խնդիրների ներկայացում, ինչպես նաեւ դասընթացի մասնակիցների ակնկալիքների ներկայացում և քննարկում: Դասընթացավարը մասնակիցներին ներկայացնում է կարիքների գնահատման ընթացքում վեր հանված ակնկալիքները, հրավիրելով ներկաներին ներկայացնել այլ առաջարկներ:
Քննարկում:
Տևողությունը՝ 10 րոպե:

Թեմա II. Ի՞նչ է տեղեկատվության ազատությունը
Տեղեկատվության ազատություն հասկացության պարզաբանումը, տեղեկատվության ազատության առավելությունները պետական կառավարման մարմինների համար: Դասընթացավարը ներկայացնում է ՏԱ հասկացության վերաբերյալ առկա հիմնական մոտեցումները:
Մտային գրոհ՝ ինչու՞ է անհրաժեշտ տեղեկատվության ազատության մասին օրենսդրությունը: Մասնակիցները ներկայացնում են իրենց մոտեցումները, կարծիքը, որից հետո դասընթացավարն ամփոփում է մտային գրոհում հնչած կարծիքները և ամբողջացնում ցանկը:
Քննարկում
Տևողությունը՝ 20 րոպե:

Թեմա III. Տեղեկատվություն ստանալու իրավունքը
Ովքեր ունեն տեղեկություն ստանալու իրավունք: Ինչպիսի տեղեկություններ ստանալու համար են սովորաբար դիմում: Ինչպես են դիմում տեղեկատվություն ստանալու համար, տեղեկություն ստանալու բանավոր, գրավոր, էլեկտրոնային հարցումներ: Տեղեկություն ստանալու միասնական հարթակ:

Քննարկվում են տարբեր իրավիճակներ, երբ տեղեկատվություն ստանալու համար դիմում են հասարակության տարբեր խմբեր (լրագրողներ, ՀԿ-ներ, քաղաքացիներ, տարեցներ, երեխաներ, բիզնես կազմակերպություններ, փաստաբաններ և այլն):
Տևողությունը՝ 50 րոպե:

Ընդմիջում՝ 20 րոպե:

Թեմա IV. Տեղեկատվության տրամադրման սուբյեկտները
Աշխատանք տեղեկություն ստանալու հարցումների հետ: Ում պարտականությունն է տեղեկատվության տրամադրումը: Տեղեկություն տրամադրելու կարգը, մեխանիզմները (առցա եւ առցանց) և ժամկետները: Դասընթացավարը ներկայացնում է դիմողների հետ աշխատանքի սխեման՝ սահմանված ազգային օրենսդրությամբ և լավագույն փորձով՝ տեղեկություն ստանալու հարցմանն ընթացք տալու անհրաժեշտ 6 քայլերը:

Քննարկում խմբերով. մասնակիցներն աշխատում են փոքր խմբերով՝ ներկայացնելով 6 քայլերի գործնական կիրառման մեկական օրինակ: Նրանք կարող են ավելացնել նաև մեխանիզմում պակասող քայլեր: Մասնակիցներն օրինակները ներկայացնում են հաշվի առնելով իրենց կառույցի փորձը տեղեկություն տրամադրելու գործընթացում: Դասընթացավարն առաջնորդում է քննարկումը:

Տևողությունը՝ 70 րոպե:

Առաջին օրվա ավարտ:

Թեմա V. Տեղեկատվության ազատության սահմանափակումները
Տեղեկատվության տրամադրման մերժման օրենսդրական հիմքերը, տեղեկատվության տրամադրումը մերժելու կարգը և ժամկետները:

Մտային գրոհ. որոնք կարող են լինել տեղեկությունը սահմանափակելու հնարավոր հիմքերը: Քննարկվում են կոնկրետ դեպքեր, երբ մասնակիցները մերժել են տեղեկության տրամադրումը: Այնուհետեւ դասընթացավարը ներկայացնում է բոլոր այն հիմքերը, որոնք նախատեսվում են ՀՀ օրենսդրությամբ և միջազգային փաստաղթերով:
Տևողությունը՝ 60 րոպե:

Թեմա VI. Պրոակտիվ հրապարակայնություն. տեղեկության հրապարակումը սեփական նախաձեռնությամբ
Պարտադիր հրապարակման ենթակա տեղեկությունները, հրապարակման ժամկետները, ձեւաչափը: Պրոակտիվ հրապարակայնության ապահովման արդյունավետ միջոցները՝ պաշտոնական կայքեր, սոցիալական ցանցեր, մեդիաներ և այլն:

Քննարկում. մասնակիցները ներկայացնում են պրոակտիվ հրապարակայնության ապահովման իրենց հաջողված փորձը: Դասընթացավարն ամփոփում է՝ ներկայացնելով միջազգային լավագույն փորձն այս ոլորտում:
Տևողությունը՝ 30 րոպե:

Ընդմիջում՝ 20 րոպե:

Թեմա VII. Բողոքարկում եւ տեղեկություն ստանալու իրավունքի խախտման համար պատասխանատվությունը
Տեղեկատվության ազատության խախտումները, խախտումների բողոքարկման կարգը:
Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրության պահանջները: Քրեական օրենսգրքով նախատեսված օրենսդրական պահանջները:
Ռազմավարական դատավարական գործեր: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը տեղեկատվության ազատության ոլորտում:
Տևողությունը՝ 70 րոպե:

2-րդ օրվա ավարտ: